## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 10

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի փետրվարի 24-ին, ժամը $15^{30}$-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Գիտական խորհրդի արտահերթ նիստ:

**Նիստը նախագահում էր** ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը:

*Գիտական խորհրդի 34 անդամներից նիստին մասնակցում էին 27-ը՝*

| | | |
|---|---|---|
| 1. Դ. Խիթարյան | 10.Ե.Դավթյան | 19. Է. Մարտիրոսյան |
| 2. Ա. Նուշիկյան | 11. Հ. Բաբայան | 20. Հ. Մելքոնյան |
| 3. Վ. Գևորգյան | 12.Դ.Սարգսյան | 21. Ա. Բարսեղյան |
| 4. Ա. Չատինյան | 13. Յու. Գրիգորյան | 22. Ն. Սելումյան |
| 5. Լ. Ստեփանյան | 14. Ա. Դանիելյան | 23. Ա. Բաղդասարյան |
| 6. Ա. Ստեփանյան | 15. Ս. Դանիելյան | 24.Վ. Վիրաբյան |
| 7. Ռ. Մարտյան | 16. Ա. Հարությունյան | 25. Լ. Մկրտչյան |
| 8. Օ. Պետրոսյան | 17. Մ. Ասատրյան | 26. Ս. Սիմոնյան |
| 9. Գ. Մուրադյան | 18.Ա. Ավետիսյան | 27. Ս. Առուշանյան |

*(Գիտական խորհրդի նիստի մասնակիցների գրանցացուցակը կցվում է):*

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին՝ Գ. Սարգսյանը. Ա. Հակոբյանը, Խ. Հարությունյանը, Ս. Հովեյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Բաղալյանը, Մ. Աղաբաբյանը:

Դ. Խիթարյանն առաջարկեց մինչ օրակարգին անցնելը՝ պարգևատրել ինստիտուտի աշխատակիցներ Ռիտա Գեղամյանին և Մարիամ Նիկողոսյանին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, և Վահան Շմավոնյանին՝ 50-ամյակի առիթով: Հատուկ շնորհակալագրի արժանացավ ինստիտուտի բազմամյա աշխատող Սիմոն Մանուկյանը:

Ծննդյան հոբելյանական 50-րդ տարեդարձի կապակցությամբ ինստիտուտի անունից պարգևատրվեց նաև բուհի ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանը:

Օրակարգի հաստատումը դրվեց քվեարկության. կողմ՝ 27-ը, դեմ, ձեռնպահ չկա:

*Օրակարգ՝*

1. Ծանրամարտի, բռնցքամարտի, սուսերամարտի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա. Դանիելյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու հարցը

**_(Զեկուցող՝ գիտքարտուղար Ա. Չատինյան)_**

2. «Սպորտային մանկավարժության և կառավարման» ֆակուլտետի դեկանի ընտրություն

**_(Զեկուցող՝ գիտքարտուղար Ա. Չատինյան)_**

3. Այլ հարցեր՝ «Կլինիկական պրակտիկա մանկական վերականգնողական կենտրոններում» գործնական պարապմունքների ուսումնամեթոդական ցուցումների հաստատում

**_(Զեկուցող՝ գիտքարտուղար Ա. Չատինյան, հարակից զեկուցող՝ Ա. Մուրադյան)_**

***1.Լսեցին՝*** Գիտական քարտուղար Ա. Չատինյանին, որը ներկայացրեց Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնի վարիչ, դոցենտ, ՀՀ սպորտի վաստակավոր վարպետ Աշոտ Ռոմանի Դանիելյանի թեկնածությունը՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար (Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են):

Մասնագիտությունը՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ»:

***Արտահայտվեց՝*** ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանը: Նա նշեց, որ Գիտական կոչումներ շնորհելու և հրատարակչա-խմբագրական խորհուրդը հաստատել է Ա. Դանիելյանի թեկնածությունը, և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն առկա են, բավարարում են ԲՈԿ-ի պահանջները՝ Ա. Դանիելյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:
Ռեկտորի ԺՊ Դ. Խիթարյանն առաջարկեց ձևավորել հաշվիչ հանձնաժողով:
Քվեարկություն. կողմ՝ 27, դեմ, ձեռնպահ չկա:

***Որոշեցին՝*** ձևավորել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Հ. Մելքոնյան, Ա. Հարությունյան, Օ. Պետրոսյան:
Քվեարկություն. կողմ՝ 24, դեմ չկա, անվավեր՝ 2:
Ըստ փակ քվեարկության արդյունքների (Գիտական խորհրդի 34 անդամներից ներկա էին 33, կողմ՝ 24, դեմ չկա, անվավեր՝ 2)՝

ՀՀ գիտամանկավարժական կադրերին գիտական կոչումներ շնորհելու կարգի 3-րդ մասի, 6.գ. կետի համաձայն՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

պետական ինստիտուտ» հիմնադրամի Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնի վարիչ, դոցենտ, ՀՀ սպորտի վաստակավոր վարպետ Աշոտ Ռոմանի Դանիելյանին *շնորհել պրոֆեսորի գիտական կոչում և երաշխավորել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատել ինստիտուտի Գիտական խորհրդի որոշումը (Քվեարկության արդյունքները կցվում են):*

***2. Լսեցին՝*** Գիտական քարտուղար Ա. Չատինյանին: Նա ներկայացրեց «Սպորտային մանկավարժության և կառավարման» ֆակուլտետի դեկանի ընտրությանը մասնակցող Տ. Սիմոնյանի և Ա. Ստեփանյանի թեկնածությունները: Դեկանի թեկնածու Ա. Ստեփանյանն ինքնաբացարկ ներկայացրեց (Ինքնաբացարկի դիմումը կցվում է):
Դ. Խիթարյանն առաջարկեց քվեաթերթիկում չընդգրկել Ա. Ստեփանյանի անունը:
Քվեարկություն. կողմ՝ 27, դեմ, ձեռնպահ չկա:

***Որոշեցին՝*** ընդունել Ա. Ստեփանյանի ինքնաբացարկը և քվեաթերթիկում թողնել միայն Տ. Սիմոնյանի անունը:
Տ. Սիմոնյանը ներկայացրեց ինքնակենսագրականը և «Սպորտային մանկավարժության և կառավարման» ֆակուլտետի իր հայեցակարգը (Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են):

***Արտահայտվեցին՝*** Օ. Պետրոսյանը, Է. Մարտիրոսյան, Ա. Հարությունյանը, Յու. Գրիգորյանն ընդգծեցին, որ Տ. Սիմոնյանը ոչ միայն խստապահանջ, օբյեկտիվ, սկզբունքային մասնագետ է և իր առջև դրված խնդիրները կիրականացնի, այլև՝ բարյացակամ անձնավորություն: Ե. Դավթյանը նշեց, որ Տ. Սիմոնյանը մոտ 12 տարի նախագահի մրցանակի համար լավագույն մարզական ընտանիք մրցաշարի գլխավոր մրցավար է, միջազգային մրցումների տեսուչ, ինչի համար պարգևատրվել է Եվրոպական օլիմպիական կոմիտեի կողմից: Որպես տեսուչ՝ Աթլետիկայի միջազգային ֆեդերացիայի կողմից արժանացել է  հատուկ մրցանակների, բացի այդ մարզական ընտանիքի անդամ է:
Դ. Խիթարյանը հավելեց, որ դեկանի թեկնածու Տ. Ստեփանյանն աշխատանքային փորձառություն ունի, լավ մասնագետ է և արժանի է այդ պաշտոնին:

***Որոշեցին՝***
**1.**Հաստատել Տ. Սիմոնյանի ՍՄԿ ֆակուլտետի դեկանի թեկնածությունը՝ ըստ ՀՖՍՊԻ-ի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի:
Ռեկտորի ԺՊ Դ. Խիթարյանն առաջարկեց ձևավորել հաշվիչ հանձնաժողով:
Քվեարկություն. կողմ՝ 27, դեմ, ձեռնպահ չկա:

*2.* Ձավորել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Հ. Մելքոնյան, Օ. Պետրոսյան, Ա. Հարությունյան:
Քվեարկության արդյունքներով 27 կողմ ձայնով՝ ըստ ՀՖՍՊԻ-ի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի 4-րդ գլխի (Գիտական խորհրդում դեկանի ընտրության անցկացումը)՝ ՍՄԿ ֆակուլտետի դեկան ընտրվեց Տ. Սիմոնյանը:

***Արտահայտվեց՝*** ռեկտորի ԺՊ Դ. Խիթարյանն *առաջարկեց հաստատել* քվեարկության արդյունքները: Քվեարկություն. կողմ՝ 27, դեմ, ձեռնպահ չկա:

***Որոշեցին՝*** *հաստատել քվեարկության արդյունքները (Քվեարկությանը մասնակից Գիտական խորհրդի անդամների գրանցացուցակը և հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրությունը կցվում են):*

***3.Լսեցին՝*** գիտքարտուղար Ա. Չատինյան, որը ներկայացրեց Ա. Մուրադյանի «Կլինիկական պրակտիկա մանկական վերականգնողական կենտրոններում» գործնական պարապմունքների ուսումնամեթոդական ցուցումները:
Ա. Մուրադյանը ներկայացրեց իր ուսումնամեթոդական աշխատանքի համառոտ բնութագիրը:
***Արտահայտվեցին՝*** Հ. Բաբայանը, Օ. Պետրոսյանը ողջունեցին նորարարությունը և առաջարկեցին առայժմ մնա որպես փորձարարական ծրագիր, ներդնել ներկայիս պրակտիկայում՝ հետագայում հաշվի առնելով ուսանողների և մեթոդիստի կարծիքները:
***Դ. Խիթարյանն առաջարկեց՝*** 1.մեթոդական ցուցումներն ընդունել ի գիտություն, 2.թույլատրել ներդնել՝ իբրև փորձարարական ծրագիր, վերջնարդյունքից հետո հաստատման հարցը լսել հաջորդ Գիտական խորհրդի նիստում:
Քվեարկություն. կողմ՝ 27, դեմ, ձեռնպահ չկա:

***Որոշեցին՝*** 1.մեթոդական ցուցումներն ընդունել ի գիտություն, 2.թույլատրել ներդնել՝ իբրև փորձարարական ծրագիր, վերջնարդյունքից հետո հաստատման հարցը լսել հաջորդ Գիտական խորհրդի նիստում:

***Արձանագրությունը կազմեց Ե. Սիմոնյանը:***

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ. ԽԻԹԱՐՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**